Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

273

8(082
И-57

1861

2011

2003

8(082) №01016
Ա-57
№74-
1008
36959

ՎԱՐԴԱՐԱՆ

'Ի ՊԷՏՍ ՎԱՐԺՈՒԹԵԱՆ

ԴԵՌԱՀԱՍԱԿ ՄԱՆԿԱՆՑ.

Աշխատասիրութիւն երից, երկուց եղբարց Գէորգայ և Սարգսի Սկանդարեանց և ընկերի Նոյայ Ղահրամանի Մե-լիքեանցի.

Թարգմանութիւն ըստ մեծի մասին 'ի Պարսկերէնէ 'ի Հայ բարբառ ։

ՏԵՏՐԱԿ Ա.

Այս գիրքս Վարդարան կոչի,
Անուշահոտ ծաղկամբ է լի.
Մատղաբար ընթերցողաց,
Բուրէ ի քիմս զհոտ կենի ։

'Ի Թ. ՏՓԽԻՍ ։
1861

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

ԳԱԲՐԻԷԼԻ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՅ ԸՆՁԻԱԾԵԱՆՑ։

58

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ;

Съ тѣмъ, чтобы, по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ. Ноября 11.го 1861 года.

Цензоръ И. Кайтмазовъ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Մեք այժմեան դարու մէջը գոլով, տեսնումենք յուշի մըտօք մարդկերանց լուսաւորութեանց արդիւնքները՝ որոնք որ տարածուած են ամէն տեղ։ Մեք էլ իբրև զմի ի նոցանէ կամելով յօժարութեամբ ազգին օգտաւէտ լինել ի լոյս ենք ընծայում զայս թարգմանեալ գիրքս, անուանեալն Վարդարան Թօթօվախօս մանկանց համար և նրանց ծնօղաց մխիթարութեանց համար. բայց գիտեմք որ խեղճ ոչխաներիս վրայ անհամար գայլեր կ՚յարձակուին առ ի պատառել, բայց ընաւ չպէտք է երկիմենք, չպէտք է երկնչենք այդպիսի անձինքներից, ըստ որում այգիի ամէն ծառերն էլ մէկ չի լինի չափով կամ հասակով, վասնորոյ մարդն էլ նման է ծառին։ Երանի այն մարդուն՝ որը որ կտեսնի իւրան ընկերի սխալանքը և ծածուկ կ՚յայտնէ, և չի հրապարակաւ դըրպարտի ինչպէս որ անում են մէկ քանի պատուելի անձինք։ Եթէ խորաղնինի աչօք նկատենք ոչ այլ ինչ է նրանց գիտաւորութիւնը եթէ ոչ փառք ստանալու, որ ամենայն տեղ գովեն նըրանց անունը և նրանց գիտութիւնը. ով մարդ, ինչ գիտութիւն որ ունիս երկրիս տակը թաղիր և կաց հողի պէս հանդարտ, որովհետև ուսումը կարելի է ի ձեռս բերել, բայց ընկերին ոչ, և էն ժամանակը հեռի ես Քրիստոսեան պատուերից. «Սիրեսցես ըզնկեր քո իբրև զանձն։» Վարդարան անուանեալ գիրը՝ որը որ թարգմանած է ի Պարսից լեզուէն ի Հայ բարբառ կարծեմք օգուտ է վասն ընթերցման և չատ պիտանի վասն բարուք կառավարութեան անձին. կարծեմք Վարդարան չինօղը Պարսկաստանումը դժուարաւ կարելի է ի ձեռս բերել. կարծեմք որ արժանի է ընկընդրութեամբ և մեծաւ հրճուանօք կարդալու նրա նախադասութիւնները, բաց ի մէկ քանիսներից, որոնք որ պատրաստում են մար-

դուն ի ծիծաղ, բայց Սաադին ներքին աչքովէ մոփկ տալ. որոյ համար, չպէտք է մեղադրենք. Սաադուն վրան անուղղութեան վարուց նորա. մենք համարեմ թէ հինգ մասից, մէկ մասը հանել ենք գրել սակս պակասութեան փողոյ, եւ կամենում ենք տետրակ տետրակ տպելու և այնպէս յերեւան ածելու մեր մտաց նպատա-կը, որոյ համար շատ դժուարութիւն ենք կրել. Մեր մխիթարու-թիւնը ոչ փողով և ոչ փառքով կարող է լինել այլ մանկանց օգ-տաւէտ բաներ պարգևելով, էնդուր որ մթութեան դարը փարա-տեցաւ աշխարհից, եկաւ ի թատրոն մարդկութեան լուսաւորու-թեան ճաճանչալի ճառագայթները, թափանցելով նոցա սրտու-մը, յետ որոյ դառան արեգակնլուսաւորութեան կեդրոնումը կանգ-նել սակս փայլման. Ո՞վ, Տէր, դու, որը որ մանկանց սրտի կայ-ծերը վառելու իբրև դհոր բորբոքեալ, խնդրում եմք, մաղթում եմք. կրկին արծարծեա, կրկին վառեալ պահեա, որ այսպիսի ուսման սիրոյ կայծը չխղեն իրանցից, այլ մինչև վերջին կատարածը իբրև անշիջելի պահպանեն. Տուր մեր թշնամիներին համբերութիւն, և կարողութիւն դի հանդարտեցին ի խոցելոյ ընկերաց, պարգևիր էն հեղութիւնը՝ որին ծառայ եմք մեք, որով կարողանան լուսաւո-րութեան ապարէզումը խաղալ: Վերջապէս այս մեր ճառման, (վիպասանութեան) միջումը կամենում ենք մէկ փոքր բան եւ բացայայտել, միայն խնդրում ենք չնեղանաք, ուսումնական ան-ձինք, և յառաջ մաղթում եմք չձանձրանաք այս մեր հետևեալ ա-ռակի համար յարաբերող առ մարդիկս: Մէկ անգամ կխարխ ծառերը պատասխանեցին պտղաւէտ ծառերին, թէ ով եղբայրք ինչու էք ամառը ծաղկում, պտղօք զարդարվում, տերևներով լի-անում. տարածելով ձեր բազմատոտ ճիւղերը ի վերայ կարկաչա-յոս աղբերց զովութիւն, կենդանութիւն տալով միանգամայն մարդկային ազգին ըստ ձերում կարողութեան. բայց երբ որ ձը-մեռը գալիս է մերկանումէք ձեր ուրախութիւն տըւող հանդերձ-ներից, և սկսումէք հագանել սգոյ հանդերձը. Պտղաւէտ ծառե-

րը մեղմաբար պատասխանեն տալի քիրավ, թէպէտ մենք մերկա-նումենք և յետոյ զարդարվումենք մեր զգեստները հագնելով, բայց չենք ձեզի պէս ամէն ժամանակ ծաղկածք և անպտուղ ե-ղածք. Մեզանից մարդիկներ են զուարճանում, բայց ձեզանից ոչ ոք, բաց ի ձիւնիցը. Վասնորոյ սիրելիք, նմանենք պտղաւէտ ծառին և ոչ թէ կիպարեսին, որոյ գլուխը և որոյ սիգաճեմութիւ-նը մինչև ի երկինքն է հասել. աշխատենք եթէ ոչ ամէն ժամա-նակ գոնեայ սահմանումը օգտաւէտ լինել մեր ազգին որ կարո-ղանանք պատրաստել փառքին և երկնից արքայութեանը ար-ժանի լինել. Մեզ եթէ Աստուած կենդանութիւն տայ կամե-նումենք «Բօստանն էլ» թարգմանել.

ԱՌ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՍ ։

Այս տաղաչափ անպէտք գիտնոց
Այլ տխմարաց և տղայոց,
Քանզի բանիւ զայս ասելով
Փորձ և կշիռ մեզ ունելով ։
    Աշխատ լերուք Հայոց մանկտիք
    Ուրախ սրտիւ գանձել ի մտի,
    Մեր բան սակաւ ձեզ պիտանի,
    Առնուլ, ի խրատ օրինակի ։
Բայց դուք եղբարք մեր սիրելիք
Որ չէք մեռած այլ կենդանիք,
Աստուծով ձեզ բանս յայտնի,
Անկեղծ սիրով լերուք բարի ։
    Արդ՝ զայս գիրըս պարզ յօրինեալ,
    Ձեզ լաւ լինի՝ առնուլ կարդալ
    Ձեր վարք ու բարքըն ուղղել, խնդալ
    Միտք ձեր սովաւ լիցին կրթեալ ։
Այս խըրատը՝ որ գըրեցաւ
Օգուտ է այնմ թէ իմացաւ,
Ուղիղ մտօք թէ հասկացաւ
Անճառ բարեօք բազմօք՝ լցաւ ։
    Բայց այս խրատ բան աւետեաց
    Ո՛չ միայն է օգուտ մանկանց,
    Այլ և բոլոր հետևողաց
    Ուսումնասէր աշակերտաց ։

Մեք եմք բնիկ Տփխիսեցիք
Ազգաւ Հայկազն՝ քաղաքացիք,
Ըստ կարեաց մեր շարադրեցինք
Զմեր զուսումն փորձեցինք։

Ի բերանոյ Գէորգայ Սկանդարեանց
.... Ղահրամանի Մելիքեանց
.... և Սարգսի Սկանդարեանց։

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ։

Թագաւոր մին հրամայեաց սպանանել զսեւամորթ գերի իւր, իսկ գերին այն անօգնական տխուր տեսարանքումը իրան ազգային լեզուով սկսեց հայհոյել Թագաւորին, որովհետև խահեմները ասել էին. Ով որ զրկվում է իրան կեանքի թելիցը, նա կասէ բոլոր էն բանը՝ ինչ որ սրտումը լինի. Երբ որ մարդը անյոյս է դառնում չկարելով ազատուիլ բարկութենիցը սկսում է սուրին ձեռք ածել, ըստ կատուի կատաղելոյ որ տեսանելով շանը սկըսում է վըէն յարձակվել։

Թագաւորը հարցրեց գերիի խօսքերը թէ ինչ է ասում, բարեգործ վազիրներից մէկը ասեց, ով Թագաւոր. ով որ բարկութիւնը կսեղմէ և կբաշխէ մարդկանց յանցանքը, Աստուած նորա կըսիրէ։ Թագաւորը գթալով գերիի վրայ խնայեց նորա արիւնը. Միւս վէզիրը, նորա հակառակորդը, նախատեց իւր ընկերոջը ասելով, որ հարկաւոր չէ Թագաւորի ներկայութեան ժամանակը սուտ վկայել բաց ի ճշմարտութենիցը։

Թագաւորը էս խօսքերիցը խռովեցաւ և ասեց. Էն վէզիրի ստութիւնը դուր եկաւ ինձ աւելի, քան թէ քո ասած ճշմարտութիւնը. Նորա գլխաւորութիւնը կեանքի ազատութեան համար էր, բայց քոյդ չարութեան համար. Ուրեմն ըստ բանի խահեմա-

մեր մարդկանց ազատութիւնը ունենալով արժանի նպատակ, նախա-
համարելի է ճշմարտութիւնը՝ որը որ պատճառում է մէկ մեծ
թշուառութիւն․ Ազատութիւնը սրտիցը բերելով լաւ է ճշմարտու-
թիւնը թելադրելով նրա հանգստութիւնը․ Երբ որ՝ Թագաւորը
վարվել էր քո թելադրութեան գեօրայ, անճշմարիտ կլինէր
թելադրելու նրա չարութիւնը։ Ֆրիդօնի բուրգի վրա գրուած էր
հետևեալ գեղեցիկ նախադասութիւնները․ Աշխարհը, ով եղբայր,
մէկ մարդոյ յաւիտենական բնակութիւն չէ․ Լէր միայն յարակ-
ցեալ հոգւով աշխարհի Ստեղծօղին, և մի յուսալ էս փառահեղ
աշխարհին, որը որ քո նմաններին շատ է փորձել, բայց յետոյ
սպանել է, երբ որ հոգւոյ ճանապարհը գտնվում է արդէն դէպ ի
յաւիտենական սիւնը, ինչ զանազանութիւն է մեռանել գահի կամ
տկլոր երկրի վրա․

Եկա՛յք, եղբա՛րք իմ դասակիցք
Այս առակին լաւ հետևեմք
Եւ այն ուղիղ խրատներին
Ուշք ու մտօք, լսողք լինիմք։
Թէպէտ ամէն քրիստոնեայք
Պարտին խօսիլ ոչ դրոյցք չարք,
Այլ ուղիղ բանք անսուտ՝ վկայք
Մինչ ունին յարգ իշխանաց յարկ։
Քանի քանի սրով սրտեր
Անբուժ վէրքով են խոցոտվեր,
Աչքերն ամէն կողմը ձգած
Ճշմարտութեան դէպ հայեցուած․
Ինչո՞ւ պէտք է էն ժամանակ
Սրտէն մերժենք սէր անքանակ
Որտեղ արիւնն է ծովացեալ
Ճմլին ալիքն հարց ծերացեալ․

Արդ՝ իմ սիրուն թոթովախօս
Մանկտի ուշիմ ճշմարտախօս.
Լերուք զգաստ սիրել զԱստուած
Պահել զօրէնս՝ զոր մեզ յայտնեաց.

Գէորգ Սկանդարեանց ։

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ ։

Թագաւոր Խարմուզին հարցրին. «ինչ յանցանքների համար հրամայեցիր դու սպանանել քո հօր փոխարքայներին, Խարմուզը պատասխանեց «ոչ մէկ յանցանքներ չգտայ նոցա մէջը, ամմա տեսնելով որ նոքա չատ են վախում ինձանից և որ նոքա բոլորովին չեն կատարի իմ հրամանքը, ես վախեցայ որ նոքա, իրանց յանձնական վախի կործանմունքը, չմերձենային առիս. Էս բանիս համար ես բռնեցի խոհեմների խօսքերը՝ որոնք որ ասելէին». Վախեցիր էն մարդուցը ով որ վախենում է քեզանից, թէպէտ և կարողէիր դու յաղթել հարիւրին քո նմաններին պատերազմի դաշտումը, քեզ յայտնի չէ, որ կատուն երկչոտութեան ժամանակը, իրան չանգերով պատառում է ընձիւղի աչքերը։ Օձը կծում է չոբանի ոտը էնդուր որ վախում է, որ էն մարդը գլուխը չջախջախէ քարով կամ փայտով.

ԳԱՐՈՒՆ։

Զուարճացիր գարուն պերճացեալ
Համայն բնութեանս առիթ բերկրարար,
Ծիծռունք աղխուք քեզ կան սպասակ,
Համայն բնութեանց դու զուարթարար.

Ե

Այն ինչ հողմ բուրենք անուշակք
Ջուարճանան զալար մանուշակք,
Ընդ կոկոն վարդից Թերաբաց
Ռոտոստեն սոխակք և Սարեակք.
Անդ՝ գեղջկաց մեր տափան արօր
Փողոտէ զդաշտ անարօր,
Արմտիք հասկանան հազար
Արօտ զայն չեղջեմք ի յամբար.

Ղահրաման Մելիքեանց.

ՑՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՑ:

Ամենայն փառք մարդոյ թափուր և ունայն,
Զայս Սողոմոն ազդէ հոգւոյն տիրական,
Համայն ազանց եթէ լինիմք տէր իշխան,
Ցարկ սեպհական է մեր անդարձ գերեզման.
Ունայն են փառք նոյն գաւազան իսկ արքոյ,
Ունայն բաղտիք կայր մեր բաղտի գեղ մարմնոյ,
Աճիւն է այն որով պանծամք գիրտ հողոյ,
Խափան արար երջանկութեան հաստատնոյ.
Օ՜ն հեշտալեաց մի պատրեսցուք յաշխարհի
Զի է ունայն այսօր վաղիւն անցանի,
Անցանիցին կեանք աշխարհ, համայն անցանի,
Որոնեսցուք զկեանս որ ոչ անցանի.
Որ չարաչար զմի դեգերին ազգք մարդկան,
Շահել զպատիւ, որ չէ անձանց սեպհական,
Շատք ի կորուստ ոչինչ ցաւին հոգեկան,
Զի՞ են պդեն ունայնութեան մարմնական.

Տո՛ւր ինձ, Աստուած, մի՛ դոլ աստեղք մեծատուն,
Զի՛ մի՛ պասքեալ պապաքեցայց ՛քո սիրոյն,
Դու ես մեր կեանք, դու անանց կեանք երջանիկ,
Դու ես իմ փառք ես քև եղեց երջանիկ։

Ս. Սկանդարեանց։

ՑԻՄԱՐԸ ՎԵՐԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՆ ՀԱՍԱԾ։

Երբ որ տէրութիւնը Եգիպտացւոց Գարունըրաշիդի ձեռքը անցաւ, նա յայտնեց, որ բռնակալի հակառակը՝ որը որ Եգիպտոսումը զոռոզ մարդկերանց ժամանակ իրան սեպհականացնում էր չաստուածութեան անունը։ Դիտաւորութիւն ունիմ ասում էր էս կողմը, բաշխելու իմ խոնարհագոյն ծառաներից մէկին։ Նա ունէր մէկ Արաբ յիմար, որոյ անունն էր Խասիբ, որին թագաւոր կարգեց Եգիպտոսի վերա։ Էս արարը էն յիմարութեան և ցանցարութեան հասած էր, հայելով դէպ ի այս հետևեալ չարունակութեանցը։ Գիւղացիներից մէկ քանիսը եկան նրա մօտ գանգատելու, որ նոքա ցանել էին բամբակ Նեղոս գետի ափումը, բայց եկաւ անժամանակ անձրև և ոչնչացրուց նոցա դիտաւորութիւնը։ Արաբն ասեց, հարկաւոր էր բուրդ ցանելու՝ որ նա ամբողջ էր մնացել։ Մէկ խոհեմ մարդ լսելով էս դատողութիւնը, պատասխանեց՝ եթէ օրական կենդաղաւարութիւնը բաժնացել էր հասկացողութեամբ, ոչ ոք չէր թշուառանայ այնքան, ինչպէս անկիրթը։ Էսպիսի մարդուն հասնում է օրական ապրուստ, էսպէսի հրաշքով՝ որոնց առաջը զարմանում է խոհեմների խելքը։ Բաղդաւորութիւնը և փառքը գործի իմանալով չէ գտնվում—, էստեղ ներգործում է միայն Աստուծոյ ամենակարողութիւնը, շատ խոհեմ և ուսումնաւոր մարդկներ, առանց քննութեան, ոսկի և թանգագին քարեր գտնելու համար զոհեցին իրանց անձերը,

բայց յիմարը գտնում է գանձ քանդելով երկիրը։ Էս բանը շատ է պատահում, յիմարը քնքշութեան աստիճանին հասած և գի- տունը թշուառութեան կեդրոնին հասած կամ լաւ ես ասել ժա- մանած ։—

Բախճանական հոգւոց դու ես
Որ զկենաց զիմաստ շնորհես,
Քան զղակունս պատուականես
Պատուականիդ ծառայ եմ ես։

Գ. Մելիքեանց։

ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ։

Պատմում են մէկ թագաւորի որդւոյ համար թէ, նա էր կարճահասակ և տգեղ. բայց նրա միւս եղբայրները բարձրահասակք և գեղեցիկք էին։ Մէկ անգամ, հայրը նայեցաւ դէպ ի փոքրահասակ որդւոյն արհամարանքով և զզուանքով։ Երիտասարդը խելօքութեամբ, իմանալով ծնողաց միտքը, պատասխանեց. ով հայր փոքրահասակ խելօքը նախահամարելի է քան բարձրահասակ անխելքիցը, ոչ թէ մէկ բանը չափով մեծ պէտք է լինի, այլ գընով և արժանաւորութեամբ։ Ոչխարը՝ որը որ փոքր է այսու ամենայնիւ սուրբ կենդանի է, բայց փիղը—մեծ և վատ։ Ամէնքից փոքր սարը Սինան է, բայց նա առանց կասկածանքի երևելի և հարկաւոր սար է Աստուծոյ առաջին, որովհետև Մովսէս Մարգարէն Աստուծոյ հետ խօսեցաւ առնելով տասն պատգամքն ժողովրդոց համար։ Լսեցիր դու, որ մէկ անգամ վտիտ խելօքը ասեց Մարմնեղ տգեղին։ Արաբացւոց ձին թէպէտ և վատ լինի, սակայն նախադասելի է մէկ բաղմակարդ էշանիցը։ Հայրը ծիծաղեցաւ և թագաւորութեան անդամները շատ հաւանեցան, երիտասարդի բացատրութեան վերա, բայց եղբարքը վեր ի վերոյ

վերաւորուեցան․ Քանի որ մարդս չէ արտասանում մէկ խօսք լաւ է մնում արժանաւորութիւնը և անպակասութիւնը նորա․ Բայց դու մի մոռանիր, որ ամէն անտառը դատարկ է, կարելի է պատահի, որ նորա մէջը քնում ըլլի Ռընգեղջիւրը․

Ասում են, որ էն ժամանակին երևեցաւ յանդուգն Թշնամի, երբ որ երկու զօրքը պատահեցան, առաջինը՝ որը որ դուրս էր գընում պատերազմի դաշտումը, Թագաւորի որդին էր և ասեց․ Ես չեմ լինի էն մարդը, որոյ մէջքը դու կտեսնես պատերազմի ժամանակը․ Ես էն եմ՝ որոյ գլուխը կտեսնես արեան և բոցերի մէջը խաղալիս․ Ով որ առաջացնում է պատերազմը խաղում է իրան անձնական արեան հետ, բայց փախչօղը պատերազմի ժամանակը խաղ է անում իրան զօրքի արեան հետ, արտասանելով էս խօսքերը յարձակւեցաւ Թշնամեաց վերայ և իւր սուսերի մաշեց մէկ քանի խոհեմ և հնարագէտ մարդկերանց Թշնամեաց զօրքից․ Յետ դառնալով հօր մօտ, գլուխ վեր բերեց աղաղակելով․ Ո՛վ դու, որին իմ դէմքը երևում էր արհամարհելի, այսուհետև մի մոռանիր՝ որ բնութիւնը պարունակվում է մեծ ձևի մէջը լըղար ձին հարկաւորվում է պատերազմի ժամանակը, ոչ թէ պարարտ եզը․

Պատմում են որ Թշնամեաց զօրքը անթիւ էր, բայց Թագաւորի որդւոյ զօրքը սակաւ էր․ Թոյլ կողմը մտածեց փախչելու, բայց երիտասարդը գոչեց․ Քա՛ջ զօրաւորներ ըզգուշացէ՛ք որ Ձեզ չհագցնէ՛ք կանանց շորերը․ էս խօսքերը արիացրին ձիաւորներին որ յանկարծ յարձակւեցաւ Թշնամեաց վերա, էս մի և նոյն ժամանակը յաղթեց․ Թագաւորը համբուրեց որդւոյ գլուխը և աչքերը, գրկելով իրան գոգումը և իւրաքանչիւր օր լսում էր նրան, մինչև որ վերջապէս նշանակեց ժառանգ Թագաւորութեան, եղբայրները լցուեցան նախանձութեամբ և խառնեցին Թոյն կերակրումը․ Քոյրը տեսնելով ոգեկործան չարութիւնը եղբարց, վերնատանից խփեց մէկ մէկուն պատուհանը․ Թագաւորի որդին իմանալով այն

տուած նշանը, հեռացաւ ամենից և ասեց, անշքեղութիւնն է և առողջ դատողութեանը հակառակ կլինէրեթէ չորհաւոր մարդիքը կորնչէին, բայց անպիտան մարդիկը բռնէին նրանց տեղը: Ո՛չ ոք չի նստի բայղուշի շուաքի տակը թէպէտ և Փասեան թըռչունը կորնչի աշխարհիցը:

Էս պատասխանի համար հօրը խմաց տուին, նա կանչեց յանցաւոր եղբայրը և պատժեց նրանց, բայց հանդարտեցնելու համար նրանց բարկութիւնը, հայրը բաժանեց իւր տէրութիւնը որդւոց վերայ, էնդուր համար, որ էլ չծագի աղմուկ բայց ի զուր էր նրա դատողութիւնը: Տասն Դարվիշներ քնեցան մէկ կարպետի տակը բայց երկու տէրութեան կառավարիչները չընակեցան մէկ տէրութեան մէջը: Եթէ Աստուծոյ մարդը ուտում է կէս հաց, նա տալիս է էն կերած հացի կէսը աղքատներին: Բայց եթէ եօթնմասիցը մէկը տիրում է Հսկայն, նա այսու ամենայնիւ ամբացած է հողում դէպի օտար տէրութիւնը:

Մի հարստութեան, այլ սուրբ դիտութեան
Ցանկայ ով մանուկ, ի տի մանկութեան,
Զի որ զգանձու պնդեսցէ զհետ
Ցաւոց և վշտաց յաւելցի զնեա:

Զինչ պէտք են մեզ գանձք բազումք
Ոսկի ակունք յոգնախումբք,
Որք ոչ մարթին տալ տիրանց,
փառս Աստուծոյ անպատում:

Սարգիս Սկանդարեանց

ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ:

Ուպլամիշ Թագաւորի պալատի դռան առաջնը՝ որ էր որդի

Ջինգիզ Թագաւորի, ես պատահեցայ մէկ Նորահասակ պատանւոյ աչքաւ երեւելի, խելօք, ամենայն նկարագրութենիցը վեր, հակացօղ և խորամիտ։

Խոհեմութեան ձիրքը մեծ իշխանի տպաւորուած էր Նրա ճակատի վրա, լուսաւոր պայծառութիւնը ճառագայթում էր Նրա դէմքին, ցոյց տալով Նրա՝ներքին մաքրութիւնը, Նրա գլխի վրա վսեմ դատողութիւնը փայլում էր մեծութեան աստղով։ Թագաւորը սիրում էր պատանւոյն՝ պատկերի գեղեցկութեանը և հոգւոյ կատարելութեան համար, կնդաւր որ խոհեմները սակաւ էին։ Հարստութիւնը բաղկանում է մեծահոգւոյ մէջը, ոչ թէ գանձերի, մեծութիւնը պարունակւում է խելքի արժողութեան մէջը, և ոչ թէ տարիներումը։ Եա պատանւոյ ընկերները սկսեցին թըշնամանել և զրպարտել Նրա հաւատարմութեան մասին և գործ դրին զանազան խորամանքներ, սրա կենացը վնաս հասուցանելու համար, «ինչ պէտք է անի ընկերների կամ թշնամիների Նախանձը, երբ որ մեծի սէրը քեզ շրջապատել է։ Թագաւորը հարցրեց պատանւոյն, «Էս ինչ վնասարարութեան Նշան է, որ հատուցանում ես քո ընկերացդ։ Պատանին այն պատասխանեց, գտնւելով Թագաւորի իշխանութեան Ներքոյ, ես հանգարտեցրի ամէն մէկին բայց նախանձաւորներիցը՝ որոնք ոչ մէկ ժամանակ չեն դադարում, և միշտ հնարք են մտածում ինձ զրկելու՝ ձեր ողորմութենից, երկար և հաստատ մնայ քո թագաւորութիւնը։ Իմ իշխանութեան ժամանակը յայտնի երեւում էր, որ ես ոչ մէկի սիրտը չէի վիրաւորում։ Բայց ինչ պէտք է անեմ թշնամիներին, երբ որ չարութիւնը արմատացել է Նրանց մէջ»։ Մեռիր, որ ազատւես, ով Նախանձաւոր, որովհետև Նախանձաւորութիւնը բարոյական հիւանդութիւն է, որից միայն կարելի է ազատել մահով։ Գժբաղդները կամենում են բաղդաւոր մարդկերանցը վնասել, բայց մշկաթեփ աչքերը, ցերեկով որ չեն տեսնում, ինչ մեղ ունի լուսաւոր Արեգակը։ Մէկ խօսքով լաւ է հազար աչք կուրանայ, քանի թէ լուսաւոր Արեգակը։

Ղոհրաման Մելիքեանց

ՔԱՐՈԶ։

Իմ միտս է՛ գալի՛ որ ես երեխայութեան ժամանակումը, էի շատ Աստուածասէր, շատ անգամ հսկէի գիշերն ամբողջ և աղօթքով անց էի կացնում իմ ժամանակը։ Մէկ գիշեր ծառայութենով պարապումէի մինչևի առաւօտը, ես չխփեցի աչքերս և բռնած ունէի կռանակս օրհնեալ գիրը, էս միջոցումը՝ տնեցիքը իմ չորս կողմը քնել էին, ես ձայն տուի իմ հօրս, թէ «Հայր, նոցանից ոչ մէկը չէ բարձրացնում գլուխը՝ որ աղօթք մատուցանէ Արարչին, Նրանք էնպէս քնած են կարծես թէ մահուան քնով են ննջած, ծնօղը նկատեց և ասաց իւր մտքումը. ով հայրական հոգի, եթէ որ դու էլ ննջէիր խոր քնով աւելի օգտաւէտ կլինէր քան թէ ցեցի նման մտնիլ ուրիշի մուշտակը (Թանկագին մազ)։ Հպարտը ոչ ոքի չի տեսնի իրանից ջոկ, որովհետև նրա հոգևոր հայեցուածքը ծածկած է վարագուրով, լուսաւորիր Աստուած նրա աչքերը, որ նա չտեսնի իրանից թշուառագործին։

Սարգիս Սկանդարեանց։

ԽՍՏՈՒԹԻՒՆՔ ԹԱԳԱՒՈՐԻ։

Պատմում են, թէ Պարսից թագաւորներից մէկը ագահութեամբ յափշտակում էր իւրան ժողովրդոց, կայքը և սկսում էր նեղացնել նրանց և քամակիցն ընկնել ժողովուրդը շատ նեղանալով՝ մտացումը գլխն օտար երկիր գնալ։ Երբ որ ցրուեցան ենթադրեալքը

սակաւացան և թագաւորական եկամուտները, դադարկուեցաւ խազինան. (գանձարանն) և թշնամիներ սոխ վերայ կանգնեցան ամէն կողմից: Ինչպէս խոհեմները ասել էին, «ով որ տարաբաղդութեան մէջը ցանկանում է գտնել օգնութիւն, թող բաղդաւոր օրուսը կրան մեծամեծ գործողութիւններովը արխանա» Քո սարակը քեզանից կհեռանայ, թե որ դու չես սիրել նորան: Լեր բարի և ողորմած, որովհետև սրանով կարողես քաշել դէպի քեզ միւս սարակները: Մէկ անգամ թագաւորի նեղկացութեան ժամանակը կարդում էին Շահնամի գրքի մէկ երեսումը, որտեղ որ պատմում է անօրէն Սահակի կործանման, և Ֆրիդոնի թագաւորելոյ վերա։ փոխարքայն հարցրեց թագաւորին, ինչպէս Ֆրիդոնը առանց փողի և զօրքի կարողացաւ թագաւորութիւն գտնել: Թագաւորը պատասխանեց. «ինչպէս որ քեզ յայտնի է, ժողովուրդը արդարութեամբ և ջերմեռանդութեամբ շրջապատեց նորան, և զօրութիւն տալով արին նորան տէր և իշխան»: Փոխարքայն պատասխանեց. «երբ որ ժողովուրդը շրջապատելով իւր իշխանի չորս կողմը պարգևում է թագաւորութիւն, բայց ինչ ես ցրւում քո հպատակներին: Եթէ կամենում ես թագաւորութիւն անելու, լաւն էնէ, որ դու մանաւ չափով քո անձը դնես նոցա պահպանութեան վերա։ Թագաւորը հարցնում է, «ինչ պատճառաւ, զօրքերը և ժողովուրդը պատրաստ կլինեն ընկերանալ իրանց թագաւորի հետ». Փոխարքայն ասաց: «Թագաւորին հարկաւոր է ճշմարտութիւն որ հպատակները գտանեն համարձակութիւն մերձենալոյ, ողորմութիւն՝ որ մարդիկ նորա մեծութեան և իշխանութեան ներքոյ գտնել էին խաղաղութիւն և հանգստութիւն: Բայց դու չունիս ոչ այս, ոչ այն, թագաւորի իրաւունքը չէ. իւր ժողովրդեանը չարչարել, որովհետև գայլերը ամենեւին հովիւ չի դուրս գալ»: Գեղեցիկ խրատները փոխարքայի դուր չեկան թագաւորին, էնդուր համար հրամայեց սպանել նորան և բանտը դնել, մի քանի ժամանակից յետոյ թագաւորի քրոջ տղայքը վեր կացան

ար֊ դարութեամբ և պաշտպանում էին հայրենական տէրութիւնը ժողովուրդը՝ որոնք նեղութիւններից ցրուել էին օտար երկիրներ օգնութիւն տալով նրանց յարձակուեցան թշնամիների դրօշակների վրա և յաղթելով նրանց, դուրս քշեցին Տիրանին իւր տէրութիւնից ։ Էն Թագաւորը՝ որը որ անիրաւութիւն է անում իւր հպատակներին, թշուառութեան օրը իւր բարեկամներին պատրաստում է թշնամի ։ Խաղաղութիւն դցէ քո հպատակների հետ և չես վախենալ թշնամիների անզօրութիւնից, ինչու որ թագաւորի ճշմարիտ հպատակները մարդիկներն են ։

Գէորգ Սկանդարեանց ։

ՄԵԶ Է ԱՍԱԾ ԷՍ ԽՐԱՏԸ ·

Թագաւորներից մէկը, իւր ծառայով նստել էր նաւի մէջն. ծառայն չէր տեսել ծովը, ոչ մի ժամանակ չէր փորձել ծովագնացութեան դժուարութիւնները, նեղութիւնները, որոնք որ միացած են ծովագնացութեան հետ սկսեց լաց լինել և հառաչել, դողում էր բոլոր մարմինը, ինչքան որ փաղաքշանքներ էին անում նրան, ամէնն էլ դատարկ էր ։ Թագաւորի բաւականութիւնը հատաւ, չէին իմանում ինչով մխիթարել ծառային. Էն նաւի մէջն կար մէկ բանաստեղծ մարդ, որը որ յայտնեց պատրաստութիւն հանդարտեցնելու համար իր ծառային ․ եթէ կհրամայեն ։

Թագաւորը պատասխանեց. «շատ կպարտաւորէք ինձի» ։ Խոհեմը հրամայեց գցել ծառային ծովը ․ Մէկ քանի անգամ ջուր կուլ տուեց, և յետոյ բռնելով նրա մազերիցը դուրս քաշեցին նաւի մօտ, և նա երկու ձեռքով բռնեց կայմը, նրա հակառակ ընդունեցին նաւումը և կործանմունքից ազատուողը՝ նստեց մէկ քըն-

ջուրը և հանդարտեցաւ ։ Այս բանը հաճոյ թուեցաւ թագաւորին ։ Նա ցանկացաւ իմանալ ինչ միտք ունի էս ասացքը ։ Խոհեմը ասեց. «գերին չունէր առաջուց ոչ մէկ հասկացողութիւն ի վերայ ընկղման (խեղդվելու) և էստուր համար էլ չէր իմանում նաւի արժանի պահպանողութիւնը» Ճշմարիտ էզպէս է, առաջուց չի իմանայ ազատութեան գինը մինչև չընկնի թշուառութեան մէջը։ Ով դու յագեցեալ, որին չէ հաճելի ցորեան հացը, միայն ախորժելի է նրան, ինչ որ զզուելի է ուրիշների աչքերումը ։

Ղ. Մելիքեանց։

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ.

Բժշկապետ Լօխմանին հարցրին, թէ ումից ես սովորել քաղաքավարութիւն ։ Նա պատասխանեց. «թէ անքաղաքավարներից և ազէտներից, որովհետև էն բանը, ինչ որ նրանց խօսակցութիւններումը ինձ չէր ախորժ գալիս, նրան արհամարհում էի»։ Եթէ որ խօսօղը հարկաւոր բաներ չէր խօսում, խոհեմը քարշում է դէպի ինքը կրթութիւն. բայց եթէ ազէտի մօտ կարդան հարիւր գլուխ փիլիսոփայական գրքերից, նրա ականջները այնու ամենայնիւ կլսեն յիմարութիւն ։

Սարգիս Սկանդարեանց։

ԱՌԱԿ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ.

Թագաւորներից մէկը մեռնելու ժամանակը չաւնենալով ժա-

ռանգ՝ այսպիսի կարգադրութիւն արեց, որ ով առաւօտը տան մտնի քաղաքը, նրա գլխին դնեն թագաւորական թագը և յանձնեն նրան տէրութիւնը ։ Պատահմամբ առաջինը՝ որ մտաւ քաղաքը, աղքատներից մէկն էր՝ որ իրա կենաց բոլոր ժամանակը հաւաքում էր չորի կտորտանքներ իրա հին ձորձի վերայ կարկատելու ։ Թագաւորութեան անդամները և իշխանները կատարեցին անհրաժեշտ , թագաւորական պատուէրը և պահ տուին նրան կառավարութեան և գանձի սանձը ։ Աղքատը մէկ քանի ժամանակ կրեց թագաւորութեան ծանրութիւնը, մինչև որ ազնուականներից մէկ քանիսները հեռացրին իրանց վիզը թագաւորին հնազանդուելուցը և դրացի թագաւորները բոլոր կողմերից վերկացան նրան հակառակ և սպառազինեցին զօրքերին հայհոյել և հակառակել իրանց թագաւորին ։ Վերջապէս պատերազմողների և ժողովրդի միացեալ զօրութիւններով յաջողեցաւ խառնակիչներին՝ որ քաղաքներից մէկ քանի մասը ոչնչացրին թագաւորի իշխանութիւնից ։ Աղքատի յոյսը կտրուեց էս անցքերից, մէկ ժամանակից յետոյ վաղածանօթ բարեկամներից մինը՝ որ թագաւորի խղճութեան ժամանակը ընկեր էր եղել աղքատութեան մասին, ճանապարհից յետ դառնալով նրան տեսաւ թագաւորական գահի վերայ և ասաց. «Մեծ փառաբանութիւն Նախախնամօղին՝ բաղդը բաց արեց քեզ համար Իրա մեծ պահպանողութեամբ և ճանապարհ դէպի մեծութիւնը, վարդը քո ծաղկեցաւ փշի տակիցը, բայց փուշը դուրս եկաւ ոտներիցդ, մինչև որ եկար դէպի այս սարիապառածը» ։ Մի և նոյն ժամանակը, որտեղ է դժուարութիւն այնտեղ էլ է հեշտութիւն, ծաղիկը երբեմն ծաղկում է, երբեմն թառամում է , ծառը կամ մերկանում է կամ զարդարվում է իր տերևներով ։

Թագաւորը պատասխանեց. «Եղբայր, ես արժանի եմ, լաց տաս և ոչ թէ բարևես, այն՝ ինչ որ դու տեսար մի ժամանակ՝ որ կէս հացի կարիք ունէի, բայց այսօր զբաղուած եմ մի ողջ թա-

դաստութեան բաղդով։ Եթէ մենք չենք ունենում երկրային փառք, էն ժամանակը արատութիւն է մեզ, բայց եթէ նրանցից հեռացած ենք, նստում ենք ինչպէս տկար անձինքներ. ուրախութեանց խորշերումը, (քունճերումը) երկու մատի բանչկայ բացի էս աշխարհից, որովհետև միակերպ անհանգիստ է հոգին, երբ որ մենք զուարճանում ենք և երբ որ նրանից զրկվում ենք։ Եթէ կամենում ես լինել հարուստ, սովորիր խնայողութիւն՝ որ ամենամեծ գանձ է, Եթէ հարուստը փէշով ոսկի շաղ տայ մի ցանկայնար նրան ձրի, որովհետև շատ անգամ լսել եմ մարդկերանցից որ աղքատի համբերութիւնը հարուստ մարդոյ ընծայից վերա նախադասելի է.

Գէորգ Սկանդարեան։

ԱՌԱԿ.

Դատաւոր ունէր մի աղջիկ, որ չափազանց տգեղ էր, բայց արդէն հասել էր ամուսնութեան ժամանակը, մտիկ չտալով նրա հարստութեան և օժտի (բաժնքի) վերայ՝ ոչ ոք չէր կամենում նրան առնել ի կնութիւն։ Թանկագին և աղնիւ չորերը կորցնում են իրանց յարգը, երբ որ նրանք չեն գեղեցկացնում տգեղ հարսին։ Վերջապէս ակամայ կամօք տուին նրան մէկ կուրի։ Պատմում են՝ որ էս ժամանակներումը Ցէյլոն կղզուցը եկաւ մէկ բժիշկ, որ կուրաց աչքերը լուսացնում էր։ Դատաւորին հարցրին. «ինչու չես հոգս քաշում քո փեսայի աչքերի առողջութեան համար. Դատաւորը պատասխանեց, «վախենում եմ որ տեսանելով լուսաւորութիւն, դուրս անէ իմ աղջկան, տալով քէբինի վճռած փողը»։ Տգեղ կնոջ արժանի է կոյր մարդ.

Ղահրաման Մելիքեան։

"Որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի, և որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցի„ ։

ԱՌԱԿ։

Պատմում են, մի ժամանակ Բաղդատ քաղաքումը դրօշակի և վրանի մէջը կռիւ բացուեցաւ։ Դրօշակը՝ որ լցուած էր ճանապարհի փոշով պատառոտուած երկաթի վերայ ասում էր վրանին մեծաւ բարկութեամբ։ «Մենք երկուս ես և դու, ունինք մէկ պարոն և ծառայում ենք թագաւորի պալատի դուռը. բայց ես դութիւններից ես ոչ մի աչք թափ տալու մէջից չեմ դադարում դոնուելով ճանապարհումը, դու չես քաշում երբէք ծուննդութիւն և անտապատ. ես յառաջ եմ գնում ինչու համարես առաջանում մեծամեծ փառքով և վայելչութեամբ. Դու լուսաւորում ես լուսնի նման ճառագայթող աղջկանց և տասամանիներիան բարօղ կանանց, բայց ես զօրավարների ձեռքերին եմ, ուստ ձևս կտորած են պատերազմումը»։ Վրանը ընդդիմաբանեց, «գլուխս խոնարհացնում եմ դէպի ցածը, բայց դու բարձրացնում ես նրան դէպի երկինքը»։ Ամենայն մարդ, ով որ առանց հաւկացուդութեան իւրան կվարէ այս ունայն և անցաւոր աշխարհումը, նա գլխի վայր կգցէ իրան։

Սարգիս Սկանդարեանց։

ԱՌԱԿ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ։

Մովսէս մարգարէն տեսաւ մէկ աղքատի՝ որ չունենալով կարողութիւն ծածկելու իւրան մերկութիւնը, մտել էր աւազի մէջ. Նա իսկոյն եկաւ Մովսէսի մօտ անկաւ նորա ոտները, լաց էլաւ,

1008
36959

Գոս. Библиотека
ЗОНЗ АрмССР

աղաղակեց, որ աղօթէ Աստծուն իրա տեղ իր ապրուստի համար, Մովսէս աղօթելով առ Աստուած աղքատն այն ստացաւ հարստութիւն ։ Մի քանի օրից յետոյ Մովսէսը յետ դառնալով Աստուծոյ հետ խօսակցութիւն անելու տեղիցը, պատահեցաւ այն աղքատին, կապած ձեռներով, և շրջապատ ամբոխով, մերձեցաւ նրանց և հարցրուց այն անցքի պատճառը ․ որին ասացին «Թէ խելագարել է և մի մարդու սպանել է․ հիմայ տանում են պատժելու» ։ Եթէ չնչին կատուն ունեցել էր թևեր, էն ժամանակը նա կջնջէր աշխարհիցը ճնճղուկների ցեղը, տուէք տկարին զօրեղ ձեռքը, նա կզօրանայ և կկտրէ տկար մարդկանց ձեռքերը ։

Մովսէս մարգարէն իմանալով Արարչի ծածկագիտութիւնը , խնդրեց ներողութիւն իրա անյարմար աղօթքի համար և ասաց․ «եթէ Արարիչը պարգևել էր մարդկանց աւելի ապրուստ, նրանք կկատաղէին երկրիս վրայ» ։ Ով կուրացեալդ, քեզ ինչ բանը արգելօք ընկնել կորստեան մէջ, եթէ չէիր թռցրել ճնճղուկներին, երբ որ չնչինը համնում է արժանաւորութեան սարի խռռչումը և գտնում է հարստութիւն․ անհրաժեշտ նրա համար խաղաղ սուր է ։ Ահա՛ ծրղլախի խօսքեր է աւանդում խոհեմը, լաւ է մըրջիւնին լինել առանց թևի, հարուստ հայրը մեղր ունի բայց որդին չարչարվում է ջերմութեամբ, նա՝ քեզ չէ տալի հարստութիւն, քեզանից լաւ է հասկանում քո օգուտը ։

Գէորգ Սկանդարեանց ։

Ա. Ռ Ա Կ ։

Պատմում են թէ մէկ չար մարդոյ վերայ, որ խփեց մէկ անմեղի գլխումը քար, վերջինը չունենալով զօրութիւն վրէժխընդիր լինելու, վեր առաւ էն քարը իրան մօտ և պահեց ։ Մի քանի

ժամանակից յետոյ Թագաւորը բարկանալով էս անվրէժ զինուորի վերայ, հրամայեց փոսը գցել վշտակրեալը ղարմացաւ այն տեղ. և էս մի և՛ նոյն քարով խփեց նրա գլխին, նա հարցրուց նրան դու ով ես, և էս ինչ է նշանակում, վշտակրեալը ասաց. ես նա եմ և այս էն քարն է՛ որ անցեալ ժամանակումը իմ գլխին խը-փեցիր ։ Անյոյսը փոխեց կոչեց, ուր էիր դու մինչև այժմ, վշտա-կրեալը պատասխանեց.«ես միտք էի անում քո չարութեան վրա. բայց այժմ տեսանելով քեզ էսպիսի բանտումը, գտայ յարմար ժամանակ վրէժ խնդրութեան համար» ։ Որովհետև խոհեմ մար-դիքը ասել են, երբ որ անարժանին կտեսնես բաղդաւոր, մտքդ բեր, որ խոհեմ մարդիկները էսպիսի պատահմանց մէջ խորհուրդ են տալի քեզ լինել հեռաքրքիր ։ Եթէ չունիս չանդաօգնիկներ, էն ժամանակն դատողութիւնը հրամայում է չարճակուիլ կենդա-նեոյ սակռին, ամենայն, ով որ կկռուի Պօղվատի բռան հետ , կջարդի իրան ոսկէ ձեռը, սպասիր, մինչև ճակատագիրը կապի զօրեղի ձեռքը, յետոյ ըստ կամեցողութեան, կտրիր նրա գագաթը ։

Ղեւոնդեան Մելքեանց ։

ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ ։

Մէկ Թագաւորի որդի ստանալով ժառանգութիւն իւրան հօրը, և առատաձեռնութեամբ, բաշխում էր անհամար պարգե-ներ զօրքերին և հպատակներին—Քանի որ հալուէ ծառը շուշի մէջն է, նրանից չէ բուրում ոչ մէկ հոտ , °դիր նրան կրակի վերայ, և տես ինչպէս Ամբրիայի պէս հոտ կտայ ։ Եթէ կամե-նում ես լինել բարի, լեր առատ, որովհետև եթէ չես ցանել սերմն դաշտումը, դուրս չի գայ նա ։

Թագաւորի որդւոյ ընկերներից մէկը ասաց այս հետևեալ անմխորժ առաջարկութիւնը, ով տէր Թագաւորի Նախարարները մեծ դժուարութեամբ հաւաքել են էս գանձը և պահել են, նրանց հարկաւորեալ ժամանակի համար, որ էսպիսի բաներից հարկաւոր է հեռանալ, որովհետև հարկաւորութիւնը առաջին է և թշնամիքը յետոյ, և լաւ չէ որ հարկաւոր ժամանակին չունենան մէկ կոպէկ էլ: Եթէ դու բոլոր գանձդ կբաժանես ժողովրդոց վրա, քո հօր մարդկանց իւրաքանչիւրին մէկ ցորենի չափ դժուար կը հասնի: Բայց ինչու չէ պէտք հաւաքել ամէնքից մէկ ցորենի չափ արծաթ՝ որ ամէն օր հաւաքուելով. դառնայ մէկ գանձ: Էս խօսքերը դուր չեկան. Նա ասաց. «Ամենաբարձրեալն կարգեց ինձ գլուխ էս ժողովրդեան վերայ. որ ապրիմ և ուրիշին էլ ապրեցնեմ. ես ծառայ չեմ որ պահպանեմ, կորաւ Կարունը՝ որ տիրում էր 40 գանձի տների, Նուշիրուանը անմահ է իրան լաւութեան համար: Մարգարէութիւնը ասում է. որ բարեպաշտ Նուշիրուանի համար որս անելու տեղումը եփում էին մէկ որսի միս՝ բայց աղ չկար, ուղարկեցին ծառայներուն գիւղը աղի համար, Նուշիրուանը հրամայեց աղը փողով առնել, որ էս չդառնայ սովորութիւն, որոյ հետևմամբը կկործանուի գիւղը, պատասխանեցին. «մինթէ էդքան փոքր աղից էդպիսի վնասներ կծագի. Նուշիրուանը ասաց. չարութեան արմատը աշխարհիս մէջ սկսուեց փոքրից, նա քանի յառաջ գնաց. էնքան էլ սաստկացաւ, հասանելով մինչև ի վերջն աստիճան:

Եթէ Թագաւորը իրա հպատակների բաղ՚ցը կուտէ մի խնձոր, նրա ծառայքը կհանեն արմատից (տակուցը) բոլոր ծառը. եթէ Թագաւորը վեր է առնում հինգ ձու, նրա ծառայքը կկողոպտեն բոլոր հաւերը: Բարկութիւն գցօղը յաւիտեան չի մնայ, բայց նրա յիշատակը անջնջելի կլինի:

Սարգիս Սկանդարեանց:

ԿՕՇԿԱԿԱՐ ԵՒ ՀԱՐՈՒՍՏ·

Ի տան միում արք երկու,
Մին կօշկակար օրն ի բուն
Եւ մին հարուստ տէր գանձու,
Մոլեալ յանկուցն չունէր քուն։

*

* *

Կօշկակարն յիւր արհեստ,
Տքնէր մեղմով և համեստ
Երգ, մեղեդի ի բերան
Տիւ և գիշերն նորայն բան։

*

* *

Հստասլածառն այն հարուստ։
Ցեսեալ զանձին զհարուստ
Եւ զաղքատին զխայել,
Ի բարութիւն նա յանել։

*

* *

Զինչ այս աղքատ ապարան,
Տքնի ճգնի զերթ անդրան,
Ի գլուխ պատառ ինչ հացի
Խրախճան խնջեան վարկանի։

*

* *

Զի՞ք իմ ոսկւոյն թիւ համար,
Զի՞ք թիւ կայից անկոպար,
Տիւ և գիշեր ի մատեան
Բիբք աչացս սեւանան.

*

* *

Ցարեաւ, չոգաւ առ դրացին,
Գանգատ բառնալ զիւր անձին
«Ասէ, լո՛ւր ինձ բարեկամ
Զի՞ք ինչ պակաս յիմում տան».

*

* *

Աղէ թէ զի՞նչ արարից,
Քոյդ խրախճան կազմեցից.
Ցարկեղս իմ կրպակաց
Ոչ են ակունք մարգարտաց.

*

* *

Ցիմ սեղանին առատ հաց
Թիւք կերակրոց են տասունք,
Բայց թէ ընդէ՞ր զքոյդ նուագ
Ջերգեմ մեղմով յիմ սենեակ.

*

* *

«Լո՛ւր բարեկամ կոշկակար,
«Առ պարկ մի մեծ կամ խարար

Ուր երթիցեմ եկ ընդ իս
Զերջանկութիւն վարկանիս»։

*

* *

Տրեալ փարթամն զկօշկակար,
Ի տուն զանձու անհամար՝
«Ա՛ռ քեզ, որքան ինչ կամիս
Մինչ լի ի պարկ զետեղիս»։

*

* *

Այս կօշկակար ի յիւր տուն
Ելից զոսկին անքանակ
Էառ ի նոյն ի չալակ,
Դիմեաց մտմտիկ յիւր ի բակ։

*

* *

«Այժ, կին դու բանիս լուր,
Տես զինչ բերեմ քեզ ի դիւր.
Ոչ աղքատի ես դու կին,
Այլ մեծատուն լոկ տիկին»։

*

* *

Առեալ յաւուր պարկ ոսկւոյն
Ցառաւօտէ ցերեկոյն,
Քուն ի յաչաց ապտալած,
Կայր նա յոտին աչօք բաց։

*

* *

Ոչ քուն ունէր ոչ դադար,
Ոչ զերդ երգէր մեղմաբար,
Այլ հրայան ի յուսին
Մոռացաւ խիկ զիւր գործին ։

*

* *

Զէ անց սակաւ ժամանակ
Տեսաւ զժրադդ զայն վիճակ,
Առեալ զոսկլին ի քամակ՝
Դիմեաց նորայն մուտջ ի բակ ։

*

* *

Տէր իմ առէ յիս հայեաց
Արկեալ զոսկլին յուսոյ բաց,
Անիծեմ ես զքայդ ոսկին
Որ զիմ եհան զհոգին ։

*

* *

«Արժ զոր ինչ եկամիս,
Աղէ զիմ ցաւս փարատես,
Զի զայն զխմաց, քուն յաչաց
Փախեան կորեան քաջ ի բաց» ։

Գէորգ Սկանդարեան ։

ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ ։

Պատմում են մէկ Թագաւորի համար, որը որ առանց փողի խեղճ մարդկերանցից առնում էր փայտը և ծախում էր հարուստների վրա, մէկ խոհեմ մարդ անցնելով նրա մօտից ասաց էս հետևեալ խօսքերը, «Դու, օձես որ ում տեսնում ես կծումես, կամ թէ բու ես (բայղուշ) ուր որ նստումես փորում ես, թող քո զօրութիւնը գայ ինձ վրա, բայց նա չէ կարող յարաբերիլ ծածկագէտ Արարչին, մի չարչարեր հողեղէն ժողովրդին, որ նրանց հառաչանքները չբարձրանան դէպի երկինքը ։ Թագաւորը Նեղանալով և տրտմելով էս խօսքերից՝ չլսեց նրան, մինչև որ մէկ գիշեր խոհարանիցը կրակ ընկաւ փայտէ տանը, այրեց բոլոր ապրանքը չարակամի և տարաւ նրան փափուկ տեղաշորից տաք մոխրի վրա, յանկարծ զարմացաւ այնտեղ այն խոհեմ մարդը որը որ նախ և առաջ խորհուրդ էր տալի, և լսելով ինչպէս Թագաւորը կրկնում էր էս խօսքերը. չեմ իմանում, որտեղից էս կրակը ընկաւ իմ տանը, — պատասխան տուեց. «Խեղճ մարդկերանց սրտերի աւաղական չնչառութիւնիցն է։ Զգուշացիր վիրաւոր սրտերի հառաչանքներիցը, նրանք վերջապէս կյառաջացնեն քեզի համար կորուստներ, մի նեղացներ թէ և կարողութիւն ունիս մէկ մարդոյ հոգին, որովհետև մէկ հառաչական և ցաւակցական բառը՝ կկործանէ բոլոր աշխարհը ։ Խոսրով Թագաւորի բրգի վերայ գրած էր հետևեալ խոհեմ նախադասութիւնները, որքան շատ տարիքներ և որքան շատ կեանք են անց կացնում ժողովուրդները երկրիս վերայ, կոխրտելով մեր գերեզմանը, ինչպէս տէրութիւնը ձեռք ձեռի բռնած հասել է դէպի մեզ, էնպէս էլ անց կկենայ մեր ձեռքից ուրիշներին ։

Պ. Աճրաճեան Մելքիանց ։

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՐԱՏ ։

Այր ոմն անուանեալ Մահամմադ՝ ունէր զսիրելի բարեկամ մի, զոր ոչ ձանձրանայր ի տեսանելն զնա։ Յաւուր միում պատասխանեաց հարազատ բարեկամին և ասաց. «Ով սիրելի եթէ կամիս ես առաւել պատուիլ յինէն, խնդրեմ գալ առ իս անգամ մի յընթացս երից աւուրց և այնու լիցի այցելութիւն քո»։ Առ քեզ օրինակ արեգակն՝ զոր ոչ այնքան սիրեն վասն մշտակայ ծագմանն իւրոյ, թէպէտ և ի ձմեռան ծածկի ընդ խաւարամած ամպօք և եթէ ծագումն նորա չհանդարտէր, յայնժամ սիրելի լինէր համայն մարդկային ազանց, որպէս սիրելիք, դուք ես զայս ճանապարհ պինդ կալջիք, պահեցէք, որպէսև զհայն զարի այլոց համեղ թուի և քաղցր, քան զհաց ցորենոյ իւրոյ։

Սարգիս Ալանդարեանց ։

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԽՐԱՏ ։

Ամբրոլայս թագաւորի գերիներից, մէկը փախաւ։ Նրա ետևից գնտուրներ ուղարկեցին և հետ դարձրին նրան ։ Հարխրապետը չարութիւն մտածելով գերիի վերայ, հրաման տուեց սպանանելու նրան։ Այս զարհուրելի տեսարանումը բազմաժողով մարդկանց առաջին, գերին գլուխ տուեց թագաւորին և ասաց. «Բոլորը, ինչ որ քո հրամանով պատիժ է պատրաստվում ինձ համար ճշմարտաբար է, ծառային ոչինչ վիճաբանութիւն չի հասնի, թագաւորական հրամանը սուրբ է, բայց ես տան մէջ սնուած լինելով

չեմ կամենում վերջի դատաստանի օրը, ծանրաբեռնել քեզ պատասխանատուութեամբ անմեղի արեան թափելոյ համար։ Եթէ կամենում ես ինձ սպանել, գոնեա սպանիր ինձ դատաստանով, որ Աստուծոյ դատաստանի առաջը գտնես ճշմարտութիւն։

Թագաւորը հարցրեց. «ինչ կանոնով կամենումես քեզ դատել» Գերին պատասխանեց, «հրաման տուր սպանելու առաջ դնդապետին, յետոյ էս յանցանքի համար, հրամայիր ինձի սպանելու որ ես սպանուել եմ ճշմարտաբար»։

Թագաւորը հարցրեց իրան Գնդապետի կասկածանքը, Գնդապետը (հարիւրապետը) յետ դառնալով դէպի Թագաւորը, էս վերջին խօսքերը ասաց. «Ես երդւում եմ տալի քո հօր գերեզմանի սիրոյ համար, թողնես էս անիրաւին, որը որ ինձի էլ թշնամութեան մէջն է ձգում»։ Իմ մեղն է՝ որ ես միտս չբերի խօսեների խօսքը՝ որոնք ասել էին. «Երբ որ դու բաց արիր պատերազմը դաժանաբար փղի հետ, էն ժամանակը յիմարաբար կտրեցիր քո գլուխը։ Երբ որ գցեցիր թշնամու դէմքին հրացան, զգուշացիր, որ չդնես քեզ գցողի նշանումը»։

Գէորգ Սկանդարեանց։

Ո՛վ որ ընկերոջ յանցանքը կթողնէ,
Աստուած էլ նրա յանցանքը կթողնէ։

Թագաւոր մնի սաստիկ հիւանդ էր և էս հիւանդութիւնը ոչ մէկ բանով չէր բժշկվում։

Յունաց բժշկներից մէկ քանիսը առաջարկեցին Թագաւորին ասելով, էս հիւանդութեանը ոչ մի բան դեղ չի լինիլ բացի մարդոյ լեղուցը. քանի՛ քանի մարդկանց մօտ դնացին և չկարո-

գացած գտնիլ բայց մէկ խեղճ գիւղացւոյ որդուցը՝ որոյ համար խոհեմները առել էին ։ Թագաւորը նրա հօրը և մօրը կանչեց և շատ պարգևներով հաճոյացրուց. և վարժապետն էլ կամեցաւ մէկ անգամ անձին մօտ մեռանելով Թագաւորին կենդանութիւն հատուցանել ։

Դահիճը կատարեց վաղվաղակի Թագաւորի հրամանը, մանուկը երեսը դէպի երկինքը դնելով ծիծաղեց. Թագաւորն ասաց. «էս տեսարանումը՝ որ ամէն մարդ վախում է և զարմանում է, բայց դու ինչու ես ծիծաղում. մանուկն ասաց. «հեզութիւնը առ ծնօղս է գնում ի փարատութիւն, և վճիռը առ վարժապետ և դատաստան էլ Թագաւորիցն է ուզվում ։ Այժմ հայրս և մայրս ինձ աշխարհային փողով ծախելով ինձ մահու են մատնում և վարժապետն էլ իմ մեռանելու համար վկայում է և Թագաւորն էլ իրան առողջութիւնը իմ մեռանելումն է տեսնում. Աստուածանից աւելի օգնութիւն չունիմ, ես ում մօտ գնամ գանգատ քեզանից ով Թագաւոր, քեզանից և քո հակառակ՝ որ պահանջում եմ արդարադատութիւններ» ։ Թագաւորի սիրտը էս խօսքից շարժեցաւ և աչքերումը արտասունքներ լցուելով ասաց. «լաւ է, որ ես մեռանիմ քան թէ անմեղին ի մահ մատնեմ իմ անձին առողջանալու մասին» Նրա գլուխը և աչքերը համբուրեց, գրկեց և շատ ողորմութիւններ պարգևեց և ազատեց ։ Ասում են թէ այս բարի գործքով Թագաւորը շուտով առողջացաւ ։ Նոյնպէս էլ էն տակի համար ասել է մէկ փղատէր Նեղոս գետի ափումը ։ «Եթէ դու չես իմանում որպիսի ճնճղուկ է գտնվում քո ոտի տակը, էն ժամանակը իմացիր որ ինչպէս էլ կլինիս դու փղի ոտի տակը» ։

Ղահրաման Մելիքեանց ։

ՍՏԱԽՕՍՈԹԻՒՆ ,

Մէկ ստախօս ճանապարհորդ Քաբի գնացող մարդկանց պէս

մաղերը քաղմացրել էր և ասում էր իրան, որ Ալիի ցեղից եմ, Քաբլի գնացող ժողովրդոց քարվանների հետ գալով. տուն մտաւ քաղաքը ցոյց տալով իրան թէ Քաբլիցն եմ գալիս, գովասանական տաղերգութեամբ ի ձեռին ներկայացաւ Թագաւորին և հաստատեց՝ որ էս իրան արդիւնքն է։ Դռնապաններից մէկը որ էս մի և նոյն տարումը յետ էր դառել ճանապարհից, ասաց որ նա պատահել է էս մարդու զոհ մատուցանելոյ ժամանակը Բասրա քաղաքումը, ինչպէս կարողացաւ նա գտնուիլ սրբազան տեղումը։ Միւսը պատասխանեց. «որ նրա հայրը Քրիստոնեայ էր Գաղատումը, ինչպէս կարող է Ալիի ցեղ լինիլ. Նրա գեղեցիկ երգը զմայլեցաւ Անվէրի առակախօսութեան ժողովքումը, Թագաւորը հրամայեց ծեծել և՛ հեռացնել էսպիսի սուտ խօսօղին։ Նա պատասխանեց. «ով Թագաւոր, մէկ ուրիշ բան կասեմ, եթէ այս առաջարկութեանս ճշմարտութիւն չի լինի, էն ժամանակը յանձն կառնեմ ձեր հրամայած որպիսի և իցէ պատիժները»։ Թագաւորը հարցրուց. «էս ինչ բան է»։ Ստախօս Դավրիշը պատասխանեց. «եթէ մէկ անծանօթ մարդ առաջարկէ ձեզ մածուն, նրա երկու մասը ջուր է և մէկ մասը մածուն առանց կասկածանքի. ճանապարհորդը աշխարհքումը սովոր է ստախօսութեան»։ Թագաւորը ծիծաղեցաւ և ասաց. «բոլոր քո կեանքումը, դու ոչինչ ճըշմարիտ բան չէիր խօսացել սրանից աւելի»։ Հրամայեց տալ նըրան պարգևներ։

Ղահրաման Մէլիքեանց։

ԱՆՑՔ։

Սուլթան Թագաւորի պալատի դռան մօտ բնակվում էր մէկ ղառամեալ մարդ, բարեպաշտ, և դիմօք գեղեցիկ որ ամենեցուն

պատվում էր, և որը որ իւրաքանչիւր մարդոյ ետևիցը գովում էր։ Պատահաբար նորա արարմունքներից մէկը դուր չեկաւ Թագաւորին. Նա սաստկաբար պահանջեց նրանից տուգանքը և հրամայեց սպանանել ծերին։ Թագաւորի իշխանները, բերելով էս պատուաւոր մարդու առաջուայ բարութիւնները և պարտաւորվելով նրա երախտեաց վերայ, իրանց բոլոր կիսաչարչար ժամանակը էս գործի համար ցոյց տուեցին նրան բարեկամութիւն և պատուասիրութիւն։ Եթէ կամենում ես բնակիլ խաղաղութեամբ քո թշնամեաց հետ, էն ժամանակը, երբ որ նա ետևիցդ բամբասում է քեզ, գովիր նրան դէմ առ դէմ, բայց եթէ վերջապէս կգայ նրա չրթունքումը մէկ երգիծեցուցիչ խօսք, դառը խօսքին մերժելու համար, քաղցրացրու նրա բերանը։

Թագաւորի ողորմութեամբ մի քանի մեռաններից ազատվեցաւ և դատաստանի տակը մնաց, մնացեալ մեռանների համար։ Դրացի Թագաւորներից մէկը ծածկաբար ուղարկեց նրա մօտ տեղեկութիւն այսպիսի մտօք։ «Այդ կողմի տէրութիւնը չիմացաւ մեծարելու քո բարձր արժանաւորութիւնը և վարվեցաւ քեզ հետ անքաղաքավարի. եթէ կամենում ես ցոյց տալ մեզ պատիւ առմեզ գալոյ, էն ժամանակը գործ կածուին բոլոր ձեր զօրութիւնները ըստ յարմարութեան ժամանակին, որովհետև իմ Թագաւորութեան իշխանները կամենում են յօժարաբար ձեր տեսութեանը արժանի լինիլ և սպասում են իմ հարցի պատասխանին»։ Ծերը իմանալով Թագաւորի տեղեկութիւնը միտք արեց, թէ էս պատասխանը ինչ հոգւով է գրած՝ որն որ ընկնելով ուրիշների ձեռքին չպարթացնեն աղմուկ, նա իսկոյն ըստ գեղեցիկ դատողութեան գրեց մի կարճ պատասխան մի և նոյն նամակի թղթի վերայ և ուղարկեց նրան։ Թագաւորի գլխաւորներից մէկը տեղեկանալով էս պատճառը, յայտնեց Թագաւորին՝ որ մէկ մարդ Թագաւորի հրամանով զանուելով բանտումը, հաղորդում է նամակներ դրացի Թագաւորներին։ Թագաւորը ունքերը կիտեց զայրացաւ և հրա-

մայեց տեղեկանալ էս համբաւի որպիսութիւնը։

Գիր տանօղին բռնեցին և կարդացին նամակը, որ ունէր այսպիսի պարունակութիւն։ «Մեծամեծ մարդկանց բարի դիտաւորութիւնը բարձրացնում է իմ արժանաւորութիւնը դէպի էն ամուր բնակարանը՝ որն որ հարկ է նոցա ինձ իրանց մօտ բնակեցուցանել, կարողութիւն չունիմ համաձայնելու, որովհետև ես էս տանը մեծացել եմ, և սակաւ պատճառի համար չեմ կարող փոխել իմ Բարերարին։ Ասած է. «էն մարդուն, ով որ ամենայն ժամանակ ցոյց է տալի քեզ ողորմութիւն՝ ներիր մեծանձնաբար երբ որ մէկ բանի համար նեղացրուց նա քեզ»։ Թագաւորին դուր եկաւ ծերի խոստովանութիւնը, նա պարգևեց գանձեր և այլ բաներ և ներողութիւն խնդրեց նրանից էսպիսի բառերով. «Ես սխալվեցայ և անիրաւաբար դառեցի քեզ», ծերը պատասխանեց. «Թագաւո՛ր, ես չեմ տեսնում Ձեզանում ոչ մի յանցանք, Ամենաբարձրեալ Աստուծոյն այսպէս էր հարկաւոր՝ որ փորձի քո ծառային և ինձ ախորժ էր՝ որ ես ընդունել էի ձեր ձեռքով էս պատիժը, որ էսպիսի դրութենումը լինէիր առ իս բարերար և ողորմած. խոհեմները ասել էին։ «Երբ որ քեզ նեղութիւն կգայ ժողովրդից, մի տրտմիր, որովհետև ժողովրդիցը չէ գալի ոչ ուրախութիւն և ոչ տրտմութիւն. իմացիր, որ էս երկու հակադրութիւնները (թշնամութիւնը և բարեկամութիւնը) ուղարկվում են Աստուածանից, որը որ երկուսի սրտերը միայն նա է ուղղում»։ Նետը թէպէտ և դուրս է ընկնում ղրահիցը, բայց խոհեմ մարդը հասկանում է, որ այստեղ ներգործում է կցօղի ձեռքը։

Սարգիս Սկանդարեանց.

Ամէն ժամանակ մարդս պէտք է ունենայ երկիւղ։

Վեզիրներից մէկը գնաց Ջուլնունի մօտ՝ որ բնակվում էր Ե-

գլխատումը, ներկայացրուց նրա առաջը իրան հոգւոյ վէրքերը և ասաց. «Որ նա օր և գիշեր գտնվում է Թագաւորի ծառայութեան մէջ, նեղանալով նրանից ազատութիւն ստանալու համար»։ Ջուլհակը լաց էլաւ և ասաց. «Եթէ ես էնպէս վախեցել էի Աստծուց, ինչպէս դու վախենում էիր Թագաւորիցը, էն ժամանակը ես կլինէի Աստուածապաշտ մարդկանցից մէկը. եթէ չէր էլել ես երկրաւոր երկուց ապառողութեանց մէջ—բարեբաղդութեան և թշուառութեան, վարդապետը կկանգնէր ամեներով երկնքումը եթէ մէղքի հոգումը նմանապէս սաստիկ էր էլել Աստծոյ երկիւղը, ինչպէս երկիւղը Թագաւորի սրտումը նա կդառնար հրեշտակ։

Գէորգ Սկանդարեանց։

Աստուածապաշտ ցոյց տուող իրան Թագաւորի առաջը։

Թագաւորին դռնով ընկաւ մէկ վարդապետ, երբ որ նոքա նստեցին սեղանի վրա, վարդապետը ուտում էր իրան սովորութենից քիչ. Բայց երբ որ վերկացան որ աղօթք անեն Աստծուն, նա աղօթում էր իրան սովորութենից աւելի, էն մաքով, որ Թագաւորին իմաց անի իր Աստուածպաշտութիւնը, ով Աբար, ես վախենում եմ, որ դու գնաս քաբին, որովհետև էս ճանապարհը՝ որով դու գնում ես, շուտով կտանի դէպի տաճկաստան. վարդապետը յետ դառնալով դէպի տուն խնդրեց ճաշել։ Նրա որդին՝ երևաւորքը թափանցիկ մտօք, հարցրուց հօրը, «միթէ Թագաւորի խնճոյքումը ոչինչ չճաշեր ես.» Հայրը պատասխանեց. «Թագաւորի առաջը ես աւելի չկերայ, և քո աղօթքով, պատասխանեց որդին, մտածիր՝ որ դու ոչինչ արժանի բան չես

արել մի՛ դու, որը որ քո արժանաւորութիւններն դրել ես ըն-
նումըդ, բայց անարժանութիւնները կամնակումդ, կեղծաւոր, հարկաւորութեան օրումը դու ինչես կամենում գնել կեղծեալ փողով ։

Ղահրաման Մելիքեանց ։

ԳԱՂՏ ՊԱՀԵԼ ԶՄԻՏՍ ԸՆԿԵՐԱՑ ։

Մէկ մարդ պահէր ըմբշամարտութիւն և ունէր երեք հարիւր վաթսուն հնարագիտութիւններ, ինչպէս որ իւրաքանչիւր օր մարտընչում էր ուրիշների հետ ։ Հոգւոյ չափ սիրելով ըմբշամարտը իւր աշակերտներից մէկին սրտաքին գեղեցկութեան համար, ուվարեցրուց նորան երեք հարիւր վաթսուն և ինն վարպետութիւններ, բացի մէկից՝ որը որ թագուցանում էր նորանից ։ Երբ որ պատանին սովորեցաւ լաւ և սաստկալով վայելին ուժեղութիւն, ոչ ոք չկարողացաւ նորա հետ մենամարտելու, նա և ի ներկայութեան թագաւորի, համարձակեցաւ ասել, որ եթէ իմ վարպետը գերազանցցի ինձանից, էն ժամանակը էս գերազանցութիւնը հիմնվում է մեծութեան և կրթութեան իրաւանց վրա, այսու ամենայնիւ նա չի կարող չարութեամբ յաղթել վարպետին բայց հնարքով հաւասար է նորան, էս հպարտ բացատրութիւնը դուր չեկաւ թագաւորին, հրամայեց երկուսին դուրս գալ յըմբշամարտութիւն և էստուր համար էլ նշանակած էր լայն ընդարձակ տեղ ։ Երբ հաւաքվեցան բոլոր պալատականները և իշխանները թագաւորութեան պատանին դուրս եկաւ հպարտաբար ինչպէս կատաղի փիղ, էնպիսի զօրութեամբ, որ եթէ պատահէր երկաթէ սար, էն ժամանակը նա կգցէր նորան քօքից, վարպետը հասկացաւ որ աշակերտը զօրեղ է իրանից և յարձակուելով նորա վրա նոր հնարագիտութեամբ, որը որ յայտնի չէր աշակերտին ։ Պատանին

չկարողացաւ սալ գլխման, վարպետը երկու ձեռօք բռնեց նըրան, վեր քաշելով գլխի վրա էարկ ի տապաստ: Ժողովուրդը սկսեց աղմկել, Թագաւորը հրամայեց վարձատրել վարպետին. բայց աշա՛կերտի հետ վարվեց խստութեամբ և անպատւութիւն արաւ նրան, որով որ նա իրան վարպետին դուրս կանչեց ի մենամարտութիւն: Աշակերտը արդարացրուց իրան այսպիսի կերպով «ով Թագաւոր, վարպետս ոչ զօրութեամբ և ոչ քաջութեամբ ինձ յաղթեց. բայց էնդով որ անծանօթ էր արել ինձ իրան հընարքներից մէկը չսովորեցնելով, այսօր էն փոքր հնարագիտութեամբ վեր առաւ և քարօքը տուեց», վարպետն պատասխանեց. «Ես պահպանեցի այս վարպետութիւնը այժմեան ժամանակի համար, որովհետև խոհեմների խօսքն է, «մի տար բարեկամին այնքան կարողութիւն, որ կարողանայ քեզ հետ հակառակել»: Արդէն յայտնի չէ քեզ էն մարդը, որ իրան աշակերտից վնաս քաշեց, կամ իրան պատուասիրութիւնը ոք չէ ցոյց տուել այս աշխարհումը կամ միայն, էս աշխարհումը չէ եղել պատուաւոր: Ոչ ոք սովորեցաւ ինձանից նետ գցելը, որ վերջապէս չէր դրել ինձ ի նշան իրան հարուածների:

Սարգիս Սկանդարեանց:

ՎԵՐՋ:

273

2013